



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “06”. 02. 2015 թ. (արձ. № 9)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “09”. 02. 2015 թ.
--	---

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2015

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան

Համալսարանի նպատակն է ապահովել ուսումնական գործընթացը՝ հիմնվելով դասավանդման և ուսումնառության վրա:

Դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակը ամրագրված է համալսարանի ռազմավարության մեջ և հանդիսանում է համալսարանի զարգացման հիմնական ուղղություններից մեկը:

Նպատակ

Սույն քաղաքականության նպատակն է ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ընտրվում են դասընթացի սահմանված նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան:

Դրա համար համալսարանը պետք է կատարի հետևյալ քայլերը.

- Սահմանի կրթական նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները ըստ Բլումի տաքսոնոմիայի:
- Կատարի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն՝ կրթական նպատակներին հասնելու համար:
- Պարբերաբար արդիականացնի դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ համապատասխանեցնելով դրված նպատակներին, ռեսուրսային բազային, ուսանողների մոտիվացիային:

Նկարագրություն

1. Դասընթացի նպատակների սահմանում

Դասընթացի նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները անհրաժեշտ է դասակարգել ըստ խմբերի կամ տիպերի (Բլումի տաքսոնոմիա)՝

- *Գիտելիքի տրամադրում և տարածում,*
- *Ընկալման կարողությունների ստեղծում,*
- *Գիտելիքների կիրառման կարողության ստեղծում,*
- *Ուսանողի մոտ վերլուծողական կարողությունների ստեղծում,*
- *Համադրման կարողության ստեղծում,*
- *Գնահատման կարողության ստեղծում:*

Անհրաժեշտ է հաշվի առնել դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառելիությունը տվյալ նպատակի իրականացման համար:

2. Դասավանդման մեթոդները ըստ կրթական նպատակների

Դասավանդման մեթոդները կարող են նկարագրվել որպես ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու միջոց:

Դասավանդման մեթոդի ընտրությունը հիմնականում կախված է դասավանդվող առարկայի առանձնահատկությունից և սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից: Ընտրված դասավանդման մեթոդները պետք է լավագույն ձևով ապահովեն ուսումնառության վերնարդյունքների ձեռքբերումը:

3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացում

Դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար անհրաժեշտ է արդիականացնել դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման համար անհրաժեշտ է՝

- Վերաճշտել դասընթացի նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները,
- կատարել ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատում,
- վերանայել և արդիականացնել դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման հիմնք են հանդիսանում լսարանային բազայի արդիականացումը, ուսանողական կոնտինգենտի մոտիվացիայի բարձրացումը, վերապատրաստված դասախոսական կազմը:

Քաղաքականության իրականացում

Դասավանդման/ուսումնառության մեթոդների և մոտեցումների մշակումը, ներդրումը և կառավարումը պետք է երաշխավորի, որ ուսանողը ուսումնառության ընթացքում ձեռք է բերել մասնագետ դառնալու համար անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ:

Պատասխանատվություն

Դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման, կիրառման և արդիականացման համար պատասխանատվություն են կրում համալսարանի ամբիոնները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման մեթոդաբանական ապահովումը դրված է համալսարանի ԿԲՌՊԻՈԱԿ բաժնի և մեթոդական խորհուրդների վրա:

Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը ենթարկվում է վերանայման համալսարանի <Փաստաթղթերի և գրանցումների կառավարում> ընթացակարգի համաձայն:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Նպատակը և խնդիրները

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավմանը և ուսանողների մոտ ունակությունների ձևավորմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման նպատակներն են՝

- Աջակցությունը ուսանողին ուսումնառության ընթացքում (մշակված մեթոդների միջոցով ներգրավումը ուսումնական գործընթաց):
- Դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման խնդիրներն են՝

- յուրաքանչյուր դասընթացի նպատակներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների սահմանում,
- դասավանդման/ուսումնառության մեթոդների պարբերաբար գնահատում և արդիականացում,
- դասավանդման գործընթացի որակի բարելավում:

Դասավանդման/ուսումնառության մեթոդների ընտրության ընթացակարգ

Դասավանդման մեթոդները կարելի է բնութագրել որպես դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու միջոց:

Դասավանդման մեթոդների ընտրությունը կախված է ՄԿԾ-ի/դասընթացի նպատակներից, սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից, դասավանդման ձևից և սովորողների կոնտինգենտից:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընդլրությունը կատարվում է հետևյալ սխեմայով՝

- ՄԿԾ-ի/դասընթացի նպատակի կամ նպատակների սահմանում և հիմնավորում:
- ՄԿԾ-ի/դասընթացի յուրացման ուսումնառության վերջնարդյունքների սահմանում:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը ըստ ՄԿԾ-ի/դասընթացի նպատակի և յուրաքանչյուր ուսումնառության վերջնարդյունքի:

- Սահմանված դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրում գործածության մեջ:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ստուգում՝ հարցումների կազմակերպում շահակիցների շրջանում:
- Հարցումների արդյունքների հիման վրա վերլուծության իրականացում, հաշվետվության կազմում և ներկայացում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:
- Որոշումների կայացում և միջոցառումների իրականացում՝ ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացմանը:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացում՝ էլնելով ուսանողի մոտիվացիայի բարձրացումից և տեխնիկական միջոցների արդիականացումից:

Դասընթացի նպատակը և դասավանդման մեթոդները

Ցածր-ճանաչողական նպատակներ: Այստեղ առավել ակնհայտ մեթոդը դասախոսությունն է, որը կարող է հանդիսանալ լավագույն մեթոդ, եթե դասավանդողի նպատակն է ապահովել ուսանողներին տեսական գիտելիքներով:

Բարձր-ճանաչողական նպատակներ: Տվյալ նպատակների դեպքում անհրաժեշտ է ուսանողներին ակտիվորեն ներգրավել ուսուցման գործընթացի մեջ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ուսանողին աջակցելու ուսուցման մեթոդներ՝ անհատական հանձնարարականներ կամ նախագծեր (կուրսային աշխատանքներ կամ նախագծեր), համապատասխան խմբակային ուսուցման մեթոդներ (սեմինարներ, խմբակայի քննարկում, խաղերի կազմակերպում, խմբակային նախագիծ): Դասընթացը կարելի է կազմակերպել օգտագործելով համապատասխան լաբորատորիաներ:

Աֆեկտիվ նպատակներ: Մրանք նպատակին հասնելու ամենադժվար տեսակն է: Տվյալ դեպքում կիրառվող դասավանդման մեթոդներ կարող են լինել քննարկումը, խմբակային ուսուցման մեթոդները, ինչպիսիք են կոնկրետ իրավիճակի քննարկումը կամ խաղերի կազմակերպումը, դերային խաղերի միջոցով վարժությունները, սեմինարները՝ հետադարձ կապի ապահովումով:

Միջանձնային նպատակներ: Նման նպատակներին հասնելու ճանապարհն է ուսանողների ակտիվացումը պարապմունքների ընթացքում: Եթե անհրաժեշտ է ուսանողի մոտ զարգացնել գրավոր հմտություններ, ապա նրան տրվում է գրավոր առաջադրանք (շարադրություն, ռեֆերատ, հաշվետվություն): Եթե անհրաժեշտ է

ուսանողի մոտ զարգացնել բանավոր խոսակցական հմտություններ, անհրաժեշտ է ստեղծել իրավիճակ, որտեղ նա պետք է ցուցաբերի խոսակցական հմտություններ (առաջադրանքի բանավոր ներկայացում, խմբակային քննակրում և այլն): Եթե անհրաժեշտ է ուսանողի մոտ զարգացնել միջանձնային կամ լիդերության հմտություններ, անհրաժեշտ է ստեղծել իրավիճակ, որտեղ ուսանողը պետք է մասնակցի թիմում կամ ղեկավարի թիմը (խմբակային աշխատանքներ, խաղերի կազմակերպում, սեմինար, դերերի փոփոխումով խաղեր):

Բազմակողմանի նպատակների դեպքում նշված մեթոդները անհրաժեշտ է ինտեգրել:

Դասավանդման/ուսումնառության մեթոդների ընտրություն

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը համալսարանում իրականացվում է կիրառելով հետևյալ հիմնական մեխանիզմները և մեթոդները՝

- Դասավանդման մեթոդների ընտրություն սահմանված ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա,
- Դասավանդման մեթոդների ընտրություն դասընթացի նպատակից և դասընթացի ձևից կախված,
- Ընտրություն և արդիականացում առարկայական/մոդուլի ծրագրերի բենչմարքինգի միջոցով,
- Դասավանդման մեթոդների ընտրություն շահակիցների շրջանակում հարցման արդյունքների հիման վրա,
- Դասավանդման/ուսումնառության մեթոդների համար SWOT վերլուծության իրականացում,
- Ընտրություն մշակված դասավանդման մեթոդների ընտրման չափանիշների հիման վրա:
- Դասավանդման մեթոդների վերանայում կամ արդիականացում հետադարձ կապի մեխանիզմի հիման վրա (հարցումներ, մշտադիտարկում).
 - ✓ հետադարձ կապ դասալսումների միջոցով,
 - ✓ հետադարձ կապ ուսանողների հետ,
 - ✓ հետադարձ կապ դասախոսական անձնակազմի հետ,
 - ✓ հետադարձ կապ այլ շահակիցների հետ:

Դասավանդման/ուսումնառության մեթոդների գնահատում և արդիականացում

Դասավանդման/ուսումնառության մեթոդների վերանայման և արդիականացման համար անհրաժեշտ է իրականացնել դրանց մշտադիտակումը և գնահատումը: Մշտադիտարկման համար անհրաժեշտ է մշակել գնահատման հստակ չափանիշներ և մշտադիտարկման թերթիկներ:

Մշտադիտարկումը ենթադրում է համալսարանի դասավանդվող յուրաքանչյուր առարկայի/մոդուլի ծրագրի ուսումնասիրում, թերությունների վեր հանում և գրանցում:

Գնահատումը ենթադրում է առարկայի/մոդուլի ծրագրում ներառված դասավանդման/ուսումնառության մեթոդների դասընթացի նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանության ստուգումը և գնահատումը նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա:

Հավելված 1

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ ըստ ուսումնառության վերջնարդյունքների

Ուսումնառության վերջնարդյունք		Դասավանդման մեթոդներ	Ուսումնառության մեթոդներ
Գիտելիքներ	<i>Գիտելիքի փոխանցում/տեղեկատվության ապահովում</i>	Դասախոսություն Դասախոսության նյութերի տրամադրում	Դասախոսության վերարտադրում Հղում տեսության վրա Գիտելիքի հստակեցում և ընդլայնում
Կարողություններ և հմտություններ	<i>Ուսանողների ներգրավում դասապրոցեսին</i>	Քննարկում Հարց ու պատասխան Համագործակցային դասավանդում/ուսուցում	Գիտելիքների մեկնաբանում Գիտելիքների հստակեցում տարբեր տեսանկյուններից
	<i>Պրակտիկա</i>	Սեմինարներ Լսարանային ցուցադրում Պրակտիկաներ	Գիտելիքների հստակեցում Ցուցադրական գիտելիքներ Փորձի կատարում
	<i>Գիտելիքի կիրառում</i>	Լաբորատոր աշխատանքներ Ներկայացումներ Խաղերի կազմակերպում Խնդիրների լուծում Դեպքերի քննարկում Խմբակային աշխատանքներ	Տեսության կիրառումը գործնականում Ընթերցման խորացում Գիտելիքների վերարդադրում Գնահատում, համադրում

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության սխեմա



